ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ. (226) 43434,
Էլ. փոստ charentsavan.kotayq@mta.gov.am

N 1687-18
06 դեկտեմբեր 2018թ.

<<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ի տնօրեն Մ.Գասպարյանին
ք. Երևան, Մ. Ավետիսյան 8ա բն. 18
էլ. հասցեն՝ madel2912@mail.ru ՀՎՀՀ՝00907267

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Չարենցավանի համայնքապետարանի և <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքված Չարենցավան համայնքի կարիքների համար ամանորյա տոպրակների (պարկիկների) մատակարարման թիվ <<ՉՔ-ԳՀԱՊՁԲ-18/7>> պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր մինչև 2018 թվականի դեկտեմբերի 01-ը մատակարարել թվով 2000 հատ ամանորյա տոպրակներ (պարկիկներ)՝ 1944000 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն Ձեր ընկերության կողմից վերը նշված ապրանքները չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ Չարենցավանի համայնքապետարանը 2018 թվականի դեկտեմբերի 06-ից՝ միակողմանի լրիվ լուծում է վերը նշված պայմանագիրը՝ թվով 2000 հատ ամանորյա տոպրակների (պարկիկների) մասով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 1944000 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Չարենցավանի համայնքապետարանի 900135101203 հաշվեհամարին փոխանցել 4860 (չորս հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ (պայմանագրի 6.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց (տուժանք) 194400 (մեկ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով՝900135101203հաշվեհամարին:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**